ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

Ճամբարակի համայնքապետ
Վազգեն Ադամյանին

03.09.2020
346-19

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ադամյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

Ճամբարակ քաղաքի բազմաբնակարան շենքերի բակում՝ ֆուտբոլի դաշտի և Սուրբ Խաչ եկեղեցու հարևանությամբ գտնվող մանկական խաղահրապարակին առնչվող՝ Ճամբարակի համայնքապետարանում առկա **բոլոր փաստաթղթերի պատճենները**, այդ թվում նաև՝ խաղահրապարակի նկատմամբ Ճամբարակի համայնքապետարանի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը, ավագանու որոշումը, որով այդ գույքը տեղափոխվել է համայնքի հաշվեկշիռ, գույքի արժեքը հավաստող փաստաթղթերը և այլն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան